

ՄԱՆ. Այժմ տեսանեմք. հա՛պա, նուիրակք,
հորդեացի ուղի:
ԼԻԿ. Կալարուք պինդ զանցան, ո՛հ Հռովմայեցիք:
(զաւարակէն նոսա):
ՄԱՆ. Բարէ, և զինուք անգամ իմոյ հրամանի
ընդդէմ ՚ի վէճ գան: Այսպէս ինչ հիւպատեանն
մեծ վայելութիւն...
ԼԻԿ. Ի Հռովմ մեծ վայելութիւն զժողովրդեամբն
հանգչի. և դու երգիծուցանես զնա խաղմարարդ
մրցութեամբ:
ԺՈՂ. Կացցէ՛ Հռեգուղոս:
ՄԱՆ. (առ ժող.): Ունկն գիք, թոյլ տուք ինձ
նշաւակել զհաղթս:
ԺՈՂ. Հռեգուղոս կացցէ:

ՏԵՍԻՆ Ը

ՀԻՆԵԳՈՒՂՈՍ, ԱՏՏԻՂՈՍ, ՊՈՐՂՈՍ ԵՒ ԱՌԱՋԻՆՔՆ

ՀՌ. Կացցէ՛ Հռեգուղոս. և ես ականջալուր եմ
այդմ. և ստիպմ հաւատալ անձին իմոյ: Նեն-
գութիւնն պահանջի, պահանջի ՚ի Հռովմ, յինէն
պահանջի: Որպիպի՛ ազգս ծնանի այժմ երկիրս
այս: Ո՛ր յղացաւ երբէք զայդ ցանկութիւն ամբ
թալի. ո՛ր անոյց զգա. ո՛ր են որդիքն Բրուտոսի,
Փարթիկայ և Կաթիլոսի: Կացցէ՛ Հռեգուղոս...
ա՛հ, երբ և վասն էր յանցանաց ատելութեան
ձերութեմ եղէ արժանի:

ԼԻԿ. Մեր սէրն է, քաջդ, որ ցանկայ խորտակել
զքոյին շղթայս:

ՀՌ. Իսկ առանց այդոցիկ զինչ լինիցի Հռեգու-
ղոս: Սղբա զիս զինեացն առնեն օրինակ բարի,
թշնամեաց շառագունանս, հայրենեաց փառք:
Եթէ ՚ի սոցանէ մերկ գտանիցիմ, ոչ ինչ այլ եմ,
քան թէ գերի ուխտագրութ և ինքնահալած:

ԼԻԿ. Նենգաւորաց ուխտաւորեցար, ՚ի կապանս
երգուար, և հաւագէտքն առ հասարակ...

ՀՌ. Է՛հ. թող անդր ՚ի բաց ՚ի խուժն և ՚ի դուժ
զանարժանդ զայդ նենգաւորութեմ պատրուակ:
Հռովմ յազգս մահացուաց ուխտապահութեան
կացցէ վարդապետ:

ԼԻԿ. Սակայն զինչ լինիցի Հռովմայ, եթէ զիւր
հայրն կորուսանէ:

ՀՌ. Յուշ լիցի Հռովմայ՝ թէ իւր մահկանացու է
հայր, թէ սասանի ուրեմն և նա ՚ի ներքոյ եր-
կաթոյ, թէ կրէ և նա երակաց ցամաքութիւն.
Թէ արդ չունի այլ վիժել վասն նորա ոչ քերտն
ինչ և ոչ ապաժոյժ. և թէ ոչ ինչ այլ մնայ նմա
բայց մեռանել զմահ Հռովմայեցւոյ: Ա՛հ, բա-
նան ինձ երկինք շաւիղ լուսաւոր. զկենաց իմոյ
բաղմամբս նարոտ կարող եմ հատանել գովու-
թեամբ, և դուք իմոյ անարգութեան ցանկայք:
Ոչ. յանհարկիցն է այդ. զիմոյ Հռովմայեցւոցս
ճանաչեմ զսիրտ: Որ միանգամ ՚ի լոյս կենաց
հասեալ շնչեաց զսիրտ Կապիտոլինի՝ այլամիտ
՚ի Հռեգուղեայ լինել ոչ ունի: Զմի մի իւրաքան-
չիւր ՚ի ձէնջ գիտեմ, զի հանէ ինձ գովութիւն ՚ի
սրտի իւրում. գիտեմ, զի նախանձ ընդ իս բերէ.
և ՚ի յոյզս անդ խանդաղատական կրիցն՝ յոր-
մէ պատրեցաւ, ուխտիւք պաղատի երկնից՝ ըզ-
սոյն գործելոյ ունել բաւականութիւն: Ա՛հ,
մի ևս այլ, մի ևս փոքրոգի թուլասրտութիւն.

յերկիր, յերկիր զլիւպակ զէնսդ. մի ևս ընթա-
ցից յաղթանակիս արկանէք նահանջ, ո՛ր բարե-
կամք իմ, որդեակք և քաղաքացիք. իբրև բարե-
կամ նպաստ հայցեմ. յորդոր լինիմ իբրև քա-
ղաքացի, և որպէս հայր հրաման տամ:

ԱՏ. Ո՛հ ինձ, ահա ամենեքեան անսան նմա:

ՊՈՊ. Ահա՛ղ. աւասիկ ամենայն ալ զինաթափ:

ԼԻԿ. Ահա քեզ ճանապարհս ազատ համարձակ:

ՀՌ. Զեզ շնորհս խոստովանիմ, բարերար ա-
տուածք. է մեր առաջի շաւիղ անխափան: Արի,
եչ Ամիլիար ՚ի նաւան. զհետ քո գամ և ես:

ԱՄԻԼ. (Ատու ուրեմն և ես սկսանիմ նախանձ բե-
րել ընդ սմա):

ՀՌ. Ողջմբ կացջիք, ո՛ր Հռովմայեցիք, և ողջոյնս
վերջին արժանի մեզ եղիցի: Գոհութիւն անմա-
հից, թողում զձեզ և թողում Հռովմայեցիս: Ա՛հ,
անարատ պահեցէք զմեծ անունդ, և դուք եղի-
ջիք իշխանք աշխարհի, և երկիր համօրէն ՚ի Հռով-
մայեցի փոխեցի: Աստուածք, բարեփառ այսր
նահանգի հովանաւորք, Էնեական զաւակին տ-
տուածուհիք պահապանք, ձեզ յանձն առնեմ
զժողովուրդս այս զիւցազանց. ՚ի ձեր լիցին խը-
նամ երկիրս այս, տունք և պարիսպք: Ինական-
ցին յաւերժ ՚ի սոսա արիութիւն, հաւատար-
մութիւն և փառք, արդարութիւն և զօրութիւն:
Եւ եթէ ասող ինչ եղեռնաւոր ազգեցութիւնս
չարեաց սպառնացի Կապիտոլինի, ահաւասիկ
Հռեգուղոս, ո՛վ գիք, Հռեգուղոս միայն ելցէ
ձեզ ՚ի սպանդ. յիմ գլուխ թափեցի սպառ-
սպուռ ցասումն երկնաւոր. և Հռովմ ողջ ան-
փնաս... Ա՛հ, արտասուք շարժին աստանօր:
Մնասջիք խաղաղութեամբ:

ՎԵՐՋ

ՀԵՏԱՔՐՔԻԱԿԱՆԻ

Պզտի՛ տղայ մըն է. — Տան մը զը-
րանը առջև մէկ ձիով կառք մը տեսայ,
ու վրան եկեղեցականը՝ ձեռքը խաչ մը
բռնած:

— Ո՛վ է մեռնողը, հարցուցի մէկու
մը՝ որ նոյն տունը բնակողներէն մէկը
կ'երևար:

— Չեմ գիտեր, պատասխան տուաւ
ինծի, բաւական է որ այն մարդուն տը-
ղան չըլլայ՝ որ երեք շաբաթ առաջ վա-
րի յարկը եկաւ բնակեցաւ: Գիտեմ որ
իրեն ինններէն մէկը հիւանդ էր: Սակայն
որուն ալ ըլլայ, դադաղէն՝ պզտի տղայ
մը կ'երևայ:

« Պզտի տղայ մըն է »: Ինչպիսի ան-
հոգութեամբ և անզգայ սրտով շատ ան-

գամ կը խօսինք « պզտի տղու մը » մա-
հուանը վրայ : Եթէ դիտնայինք ինչպի-
սի երջանկութեան աղբիւր էր այն տը-
ղայն իր ընտանեաց , — եթէ կարենա-
յինք մէյմը ըմբռնել այն կենդանի վառ
սէրը՝ որ հայրը , մայրը , եղբայրներն ու
քոյրերը վրան կապած էին . — եթէ կա-
րենայինք դիտող ըլլալ այն ընտանե-
կան խմբին՝ որ ամեն երեկոյ անոր չորս
կողմը կը պատէր . մայրը՝ որ զան գըր-
կացը մէջ կը դդուէր՝ ամենէն քաղ-
ցրահնչիւն անունները վրան յարմար-
ցընելով , մինչդեռ անոր պզտի եղբայր-
ները մէկմէկու նայելով՝ անոր նազիկ
ձևերուն վրայ զուարթ կը խնտային :
Եւ յետոյ եթէ տեսած ըլլայինք այն
տագնապը՝ զոր զգաց ընտանիքը երբ
հիւանդութեան առաջին նշանները վը-
րան երևան ելան , և հետզհետէ հիւան-
դութեան յառաջանալովը՝ երթալով
կ'աճէին . — այն պաղատանաց հայե-
ցուածքը՝ որով մայրը բժշկին կ'աղաղա-
կէր՝ որ իր գանձը խալըսէ . — այն մէկ
քանի երեցած խաբէական նշաններէն
ծնած ու մարած յոյսը . — այն ջերմե-
ռանդն սրտիւ խոր գիշերուան մէջ հե-
ծեծանքով և արցունքով՝ ցած ձայնով
փսփսած աղօթքը . — անոր պզտի եղ-
բարց սիրտ կարող լալական ձայները՝
երբ առաւօտեան դէմ անոնց ցած ձայ-
նով իմաց տուին « որ իրենց պզտի եղ-
բայրը մեռած էր » : — Եթէ մենք այն
տխուր յուղարկաւորութեան մինչև գե-
րեզմաննոցը ընկերացած ըլլայինք , և
հողոյ ծածքին ժամանակ լսած ըլլայինք
այն խեղճ մօրը յուսահատ ձայնը .
« Ո՛հ , սիրելի որդիս , ո՛հ , խեղճ որդիս »
և յետոյ տեսնայինք խեղճ ընտանիքին
տրտմութեամբ ու բեկեալ սրտիւ տուն
դառնալը և հոն ամեն վայրկեան անոնց
ցաւին նորոգուիլը՝ մեռնողին զգեստուց ,
օրօրոցին , և ուրիշ ինչևիցէ յիշատակի
տեսութեամբ . — եթէ մենք կարենա-
յինք դիտնալ , տեսնալ , լսել , զգալ այս
ամենայն , անանկ անզգայ սրտով՝ դա-
դաղի մը մեծութենէն չէինք կշռեր յու-
ղարկաւորութեան մը կարեւորութիւնը :

— Քրոմուէլ երբ յաղթանակաւ լոն-
տրա կը մտնէր , իր չորս կողմը եզոյնե-
րը՝ ժողովրդեան բազմութիւնը՝ որ զին-
քը տեսնալու կը վազէր՝ վարմացմամբ
կը ցուցընէին . ո՛հ , պատասխան տուաւ
անոնց , այդ խուռն բազմութիւնը նուազ
չէր ըլլար եթէ զիս կախաղան ալ տա-
նելու ըլլային :

— Հռչակաւոր Ծիմերման բժիշկը՝
Փրեդերիկոս մեծին հիւանդութեան մը
ժամանակը՝ Հանովր կանչուեցաւ թա-
ղաւորին հոգ տանելու համար : — Կ'են-
թաղեմ , ըսաւ իրեն թաղաւորը , որ
անդիի աշխարհը շատ մարդ զրկած
ես : — Ոչ այնչափ , պատասխանեց բը-
ժիշկը , այն խօսքը դառն գալով , որչափ
ձեր մեծամիառութիւնը , և ոչ նոյնպիսի
փառօք :

— Բարի դործ մը ոչ երբեք կրնայ
կորսուած սեպուիլ . ասոր համար թե-
րեւ է որ մեր վարուց մէջ այնքան քիչ
կը գտնենք :

— Բարձր վիճակի մէջ դաճող յիմար
մը , նման է օդապարկի մը մէջ գըտ-
նող մարդու . իր աչքին ամեն մարդ
պզտի կ'երևայ , և փոխադարձաբար
ինքն ալ ամենուն աչքին փոքր կը տես-
նուի :

— Մեծ մարդոց հագուելու և արտա-
քին փառաւորութենէ փախչելու պար-
կեշտութիւնը՝ ամենուն զարմանքը կը
գրգռէ , և ասոր հակառակ ամբարտա-
ւանութիւնը՝ իր հարստութեանց վրայ
պարծող հպարտը կը նուաստացընէ :

— Փիլոպեմէն , յոյն զօրավար մը՝ զոր
Հռովմայեցիք շատ կը յարգէին , օր մը
մինակ իր բարեկամին տունը կերակու-
րի գնաց , որ զինքը մասնաւոր հրաւի-

րած էր: Պարզ հագուստ մը հագուած ըլլալով, տանտիկինը ծառայ կարծեց զինքը: Եւ երբ կը սպասէր որ կերակուրի ժամանակը գայ, տանտիկինը խնդրեց որ կերակուրը պատրաստելու ձեռք տայ իրեն: Առանց ամենեին տըժգոհութեան ցոյց մը տալու՝ վերարկուն վար դրաւ ու սկսաւ փայտ կտրել: Այս միջոցիս բարեկամը ներս մտնալով զարմանքով մը կանչեց. ի՞նչ կ'ընես, փիլը պեմէն, ի՞նչ կընշանակէ ատ ըրածդ: — Իմ գէշ երևութիւն չահը կը հատուցանեմ, պատասխանեց զօրավարը: Այս պէս սովոր են մեծ մարդիկ ուրիշներուն զարմանքը իրենց վրայ դրաւելու:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ

Արտուտիկ օդապարիկ,
Քաղցրը ձայնեմ, ուր ես վարդիկ.
Լըցաւ հողմըն թերամանիկ.
Եկ պարեսցուք իմ նազելի,
Պարեսցուք նոյն եւ ճեմեսցուք,
Մեր պարտիզաց կաքաւեսցուք:
Զմեռն էանց, ժամ է գարնան,
Դաշտք և այգիքըն ծաղկեցան,
Սաղարթք ծառոց փայլիւնըս տան.
Եկ ցընծասցուք իմ սիրելի,
Պարեսցուք նոյն եւ ճեմեսցուք,
Մեր պարտիզաց կաքաւեսցուք:
Կարկաշաձայն ջուրքըն գընան,
Ծիրանածին երփն երփըն տան.
Թռչունք ձայնակցեալ խայտան.
Եկ պարեսցուք իմ ցանկալի.
Պարեսցուք նա եւ ճեմեսցուք,
Ի յեզր ուխիցըս ճեմեսցուք:
Երգող երգոյս ո՛վ անպիտան,
Յիշես եւ դու զվարդն աննըման,
Որ ունի հոտ անմահութեան.
Եւ ըզխոտ թարշամական,
Թարշամական ու անկայական
Խոտն առօրեայ խաբէական.
Եկ ցընծասցուք իմ սիրելի
Պարեսցուք նոյն եւ ճեմեսցուք,
Մեր պարտիզաց կաքաւեսցուք:

ԹՈՎՄԱՅԻ ՃԵՖՖԵՐՍԸՆԻ

ՏԱՄԱԲԱՆԵԱՑ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

Ձ. Ի՞նչ որ կրնաս այսօր ընել, վաղուի մի ձգեր:

Բ. Երբեք ուրիշի նեղութիւն չտաս ա. նանկ բանի համար՝ որ դու ալ կրնաս ընել:

Դ. Ստակը դեռ ձեռքդ չունեցած՝ չըլլայ որ սպառես:

Ե. Ի՞նչ բանի որ առ ժամն չես կարօտիր՝ չըլլայ որ աժան է ըսելով՝ գնես. քեզի համար սուղ է այն:

Զ. Քան զքաղց, քան զծարաւ և քան զցուրտ՝ հպարտութիւնն է որ մեզի ծանր կը նստի:

Է. Ոչ երբեք զղջացեր եմք քիչ ուտել. նուս վրայ:

Ը. Ոչ երբեք դժուարին կու գայ մեզի ինչ որ կամովին կ'ընենք:

Թ. Քանի տհաճութեանց պատճառ եւ զեր են մեզ այն ինչ թշուառութիւնք, որոնք երբեք չեն պատահիր:

Ժ. Ամեն բան իր դիւրին կողմէն առ:

Ի. Կիրք ելած ժամանակդ՝ խօսելէդ յառաջ՝ մինչև տասը համրէ. իսկ եթէ բարկութիւնդ սաստիկ է՝ մինչև հարիւր:

Այսպիսի սկզբունքներով է որ ազգ մը մեծ կ'ըլլայ: